

«Ա.Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն»

Սյունիքի տարածաշրջանային մասնաճյուղ

**The A. D. Sakharov Armenian Human Rights Protection Centre**



**ՄԱՍՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

*Oqnuտոս*

*2023 թ.*

Յ Գորիս Ջ

**29.08.2023 թ.**

**Գորիսի Գետափնյա թաղամասը սպասարկող թիվ 3 ՆՈՒՀ-ի բացման արարողությունը**

Գունեղ խմբասենյակներ, ուրախ երգ ու պար, ժպտացող աչքեր... Օգոստոսի 29-ը նշանավորվեց նաև Գետափնյա թաղամասը սպասարկող թիվ 3 ՆՈՒՀ-ի բացման արարողությամբ: Շուրջ 40 տարի անց հիմնովին նորոգվել է թիվ 3 մանկապարտեզը, ավելացել է նոր խմբասենյակ, ինչի շնորհիվ հաճախող երեխաների թիվը կավելանա մոտ 30-ով: Հիմնանորոգման աշխատանքներն իրականացվել են սուրբկենցիոն ծրագրի շրջանակներում, մանկապարտեզը զինվել է նոր գույքով՝ Գորիսի համայնքապետարանի և Focus on Children Now – FCN կազմակերպության հետ համատեղ համագործակցության շրջանակներում, իսկ խոհանոցի գույքը տրամադրվել է Գորիսի մամուլի ակումբ չԿ-ի կողմից: Միջոցառմանը ներկա էին Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը, Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը, Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ տեր Մակար վարդապետ Հակոբյանը, հյուրեր:

Աղբյուրը՝

<https://www.facebook.com/GorisMunicipality/posts/pfbid0gAg2KSsuo6MwYbNmWLLKvH9Fh1X98hrhBqusSBjnMfoLdDQzGi7Z3KkDRAYAbZgl>

**29.08.2023 թ.**

**Սահմանամերձ Խնձորեսկում բացվեց հատիկընդդեմի վերամշակման կենտրոն**

Տեսանյութը՝ [այստեղ](#):

**27.08.2023 թ.**

**Միջնադարյան Սյունիքի վիմագրության հետքերով. նոր բացահայտումներ Հին Հարժիսում**

Վեցերորդ տարին է՝ Տաթևի վանքի եւ հարակից հուշարձանների վիմագրերի ուսումնասիրման նպատակով Սյունիքի մարզի Տաթև համայնք է գործուղվում ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, վիմագրության բաժնի վարիչի պաշտոնակատար, պատմական գիտությունների թեկնածու Արսեն Հարությունյանը:

Ի դեպ, 2022թ. օգոստոսի 28-ին առաջին անգամ հանդիպեցինք Արսեն Հարությունյանին եւ գրույց ունեցանք, թեման 2014-15 թթ. Տաթևի վանական համալիրում իրականացված պեղումներն էին («Սյունյաց երկիր», N 18, 13 հոկտեմբերի 2022 թ.):

**Այցեքարտ**

*Արսեն Հարությունյանը ծնվել է 1985-ին՝ Երեւանում, արմատներով Մեղրու տարածաշրջանի Վահրավար գյուղից է:*

*2007 թ. ավարտել է Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի բանասիրական ֆակուլտետը, մինչ այդ՝ 2003-05 թթ., ծառայել է Արցախի Հանրապետության պաշտպանության բանակում:*

*2009 թվականից աշխատում է ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտում՝ առաջատար գիտաշխատող, ներկայումս՝ վիմագրության բաժնի վարիչի պաշտոնակատար, 2012-ից համատեղությամբ աշխատում է նաև Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում՝ ավագ գիտաշխատող:*

*2019-ից ԵՊՀ պատմության ֆակուլտետում դասավանդում է վիմագրություն, 2023-ից Գեորգյան հոգեւոր ճեմարանում՝ Ձեռագրագիտություն եւ վիմագրագիտություն առարկաները:*

*Ինը գրքի եւ 90-ից ավելի հոդվածի հեղինակ է, մասնակցել է միջազգային գիտաժողովների՝ Վրաստանում, Տաջիկստանում, Ռուսաստանում, ԱՄՆ-ում: Թեկնածուականը պաշտպանել է 2013 թ., թեման՝ «Վաղարշապատի վանքերը. պատմավիմագրագիտական ուսումնասիրություն»:*

2014-2015 թթ. մասնակցել է Տաթևի վանքի հնագիտական պեղումներին, որից հետո սկսել է գրադվել Տաթևի վանքի եւ հարակից բնակավայրերի հուշարձանների վիմագրերի ուսումնասիրությամբ:

2015-ից՝ ամեն տարի, գործուղվել է Սյունիքի մարզի Տաթև, Տանձատափ, Սվարանց, Հայիձոր, Շինուհայր, Խոտ, Հարժիս բնակավայրեր, ընդօրինակել է ավելի քան 300 նորահայտ արձանագրություն, որոնց հիմամբ պատրաստվում է պաշտպանել դոկտորական ատենախոսություն՝ «Միջնադարյան Տաթևը եւ նրա գրավոր-մշակութային ժառանգությունը» թեմայով:

Հավաքված նյութի շրջանակներում հրատարակել է ավելի քան 20 հոդված, այդ թվում՝ միջազգային գիտական պարբերականներում:

\*\*\*

- Պարոն Հարությունյան, ողջունում ենք Ձեր հերթական այցը Սյունիք: Հարժիս գյուղում Դուք ուսումնասիրություններ էիք իրականացրել նաեւ նախորդ տարվա Ձեր այցի շրջանակում: Կարելի՞ է ենթադրել, որ գործն այդ տարածքում անավարտ էր մնացել:

- Այո, քանի որ յուրաքանչյուր հուշարձան պահանջում է համակողմանի ուսումնասիրություն, եւ մեկանգամյա այցի ընթացքում նյութը սպառելը միշտ չէ, որ հնարավոր է: Հարժիսն այդ առումով բացառություն չէ: Եվ այս տարվա մեր այցի շրջանակում փորձեցինք սպառիչ պատասխաններ տալ թեական մնացած հարցերին:

- Հարժիսը հայտնի է նախաքրիստոնեական բացառիկ հուշարձաններով՝ մարդադեմ կուռքեր, կիսանդրիներ, ցից քարեր, տաճարային սյուներ եւ այլն: Մակայն Ձեր ուսումնասիրությունները, որքան հասկացա, միտված են միջնադարյան հուշարձանների քննությանը, որը, ինչպես Դուք եք նշում, երբեւէ համակողմանիորեն չի ուսումնասիրվել:

Ներկայացրեք, խնդրեմ, Հարժիսի միջնադարյան մշակութային ժառանգության ընդհանուր նկարագիրը:

- Հարժիսում կատարված ուսումնասիրությունները պարզում են, որ այդտեղ մենք գործ ունենք միջնադարի բոլոր շրջափուլերում՝ վաղ շրջանից մինչեւ ուշ միջնադարն ընդգրկող տարաբնույթ հուշարձանների հետ: Մասնավորապես՝ առանձնանշելի են եկեղեցական կառույցները, գերեզմանոցները, կոթողային հուշարձանները՝ խաչքարերն ու տապանաքարերը:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում նաեւ աշխարհիկ նշանակության կառույցները՝ քարավանատունն ու միաթոխք կամուրջը:

- Արդեն իսկ փաստագրված հուշարձանների ժամանակագրությունը. Ձեր մեկնաբանությունը:

- Նախեւառաջ կցանկանայի հատկանշել Հին Հարժիսի (Ներքին շենի) գերեզմանոցում (Քջնատափի գերեզմանոցում) այս տարի փաստագրված քառանիստ կոթողը, որը, մեր նախնական համոզմամբ, վաղմիջնադարյան հուշարձան է՝ հետագայում (1211 թվականին) խաչքարացված եւ կանգնեցված իբրեւ մահարձան:

Մեր այս տեսակետի օգտին է վկայում ներկայիս Հարժիսից Ներքին շեն ձգվող ճանապարհի սկզբնամասում կառուցված մատուռի ներսում գտնվող (Խաչի գլուխ անվանյալ վայրի մատուռը)՝ դարձյալ քառանիստ կոթողը, որից պահպանվել են խաչաքանդակ խարիսխը, խաչագարդ սյունը (օգտագործված պատի շարվածքում) եւ թեւավոր խաչը:

Այս եւ վերը նշված կոթողների գոյությունն ինքնին վկայում է տվյալ տարածքի վաղմիջնադարյան մշակութային հարուստ ժառանգության մասին:

Եվ ուրեմն՝ վստահաբար կարելի է արձանագրել՝ Հարժիսի տարածքում առնվազն 6-7-րդ դարերից քրիստոնեական մշակույթն իր ուրույն եւ նշանակալի դրսևերումներն է ունեցել:

- Շատ հետաքրքիր եզրակացության եք հանգել, իսկ հիմա անդրադառնանք հաջորդ հուշարձանին:

- Ժամանակագրորեն հաջորդը դարձյալ Հին Հարժիսում է՝ Ալան թագավոր կոչվող վայրում. նկատի ունեն 10-11-րդ դարերով թվագրվող եկեղեցական համալիրը՝ բաղկացած միանավ թաղակապ եկեղեցուց, արեւմուտքից կից կամարակապ գավթից, հյուսիսից կից տապանատնից:

Հուշարձանը ժողովրդին հայտնի է Ալան թագավորի եկեղեցի, որը, մեր համոզմամբ, պայմանավորված է գավթում պահպանված՝ բավական ճոխ եւ բարձրարվեստ տապանաքար-մահարձանի հյուսիսային նիստի վիմագրում վկայված ննջեցյալի՝ մանուկ Ալանի անունով:

Այդ անունն է, որ հետագայում հիմք է ծառայել՝ հուշարձանը եւ տեղանքը կոչել Ալան թագավոր, իսկ դեպի արեւելք տարածվող հարթությունը (կամրջից հյուսիս-արեւելք)՝ Ալալար:

**- Իսկ ի՞նչ հիմքեր ունեք եկեղեցին 10-11-րդ դարերին թվագրելու համար:**

- Հիմքերը մի քանիսն են: Նախ՝ բուն եկեղեցին՝ հյուսիսային մուտքով միանավ բազիլիկ է, որին արեւմուտքից կցված գավիթը՝ իր ճարտարապետական լուծումներով եւ զուգահեռներով, ունի 10-11-րդ դարերի համալիրներին բնորոշ լուծումներ:

Կամարակապ սրահների ժամանակամերձ լավագույն հուշարձանները հայտնի են Որոտնավանքից եւ Տաթևի վանքից, համապատասխանաբար՝ 1006 եւ 1043թթ., մի երևույթ, որ նույնությամբ տեսնում ենք Ալան թագավորի եկեղեցու գավթի պարագայում՝ վավերացված նույն՝ 1043 թվականով: Այդ թվագիրը, որը հիշատակում են նաեւ հուշարձանի նախորդ հետազոտողներ Երվանդ Լալայանը, Սեդրակ Բարխուդարյանը, Գրիգոր Գրիգորյանը, պահպանվել է գավթի արեւմտյան ճակատի ստորին հատվածում՝ խաչաքանդակի ձախակողմում՝ ներկայումս մասամբ եղծված:

Բացի այդ, հուշարձանի մի շարք վիմագրեր, որոնք ցարդ անտիպ են եւ հաղորդում են համալիրը կառուցած մեկենասների անունները, իրենց հնագրական առանձնահատկություններով համապատասխանում են առնվազն 11-րդ դարի առաջին կեսի վիմագրերին, որոնց լավագույն զուգահեռները կարելի է տեսնել Տաթևի վանքի վիմագրերում: Մեկենասներից հիշատակենք Հովհաննեսին եւ իր գավակներին, Մամիկոնին ու Թագուհուն, Չաքարեին ու Թամարին:

**- Եկեղեցու անունը...**

- Գրավոր աղբյուրներում եկեղեցու անունը վկայված չէ, սակայն ժողովրդական հիշողության մեջ պահպանվում է Սուրբ Աստվածածին անվամբ:

**- Ալան թագավոր կոչված վայրում, ենթադրում ենք, ուսումնասիրել եք նաեւ միջնադարյան կամուրջը՝ Որոտան գետի վրա:**

- Հին Հարժիսը Տաթևի հետ հաղորդակցող միաթռիչք կամուրջը համեմատաբար լավ է պահպանվել, թեեւ 1970-80-ականներին երկիցս փորձության է ենթարկվել Շամբի եւ Սպանդարյանի ջրամբարների պատվարների փլուզման հետեւանքով:

Ենթադրելի է, որ կամրջի կառուցումը ժամանակամերձ է քարավանատան կառուցմանը, իսկ քարավանատունը, ըստ արեւելյան մուտքի բարավորի արձանագրության՝ կառուցվել է 1343-ին:

Բայց կա մեկ ուրիշ հանգամանք եւս. կամրջի արեւելյան քիվատակին պահպանվել է արաբերեն՝ ցարդ չվերձանված արձանագրություն: Այդ արձանագրությունը, ըստ արեւելագետ Տիգրան Միքայելյանի նախնական վերձանման, թվակիր է՝ հիջրի 1081 թ., որը փրկչական 1670 թվականն է: Եթե սա հիմնավորվի, ապա կարելի է ասել, որ կամուրջը գրեթե ժամանակակիցն է Տաթևի համանման կամրջին, որ կառուցվել է 1676 թ. :

- Մինչեւ 1980-ական թթ. կեսը Ալան թագավոր կոչված վայրում կար մի խաչքար-կոթող, որն առանձնանում է իր պատկերագրական-հորինվածքային յուրօրինակ լուծումներով, այն է՝ խաչի հիմնախորանը պարուրված է իրար միահյուսված զույգ վիշապ-օձով: Ցավոք, այդ կոթողը կամայականորեն տեղափոխվել է նախ՝ Գորիսի նախկին պիոներ պալատի բակ, իսկ հետո տեղափոխվել ու կանգնեցվել է Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում՝ քողարկելով արձանագրության վերջին տողը:

**Ձեր տեղեկություններն այդ խաչքարի մասին:**

- Խաչքարն ինձ հայտնի է վիմագրագետ Գրիգոր Գրիգորյանի արխիվային լուսանկարներից (1964թ.), երբ այն ընկած է եղել սկզբնական վայրում: Լուսանկարի հիմամբ մեզ հաջողվել է ստորին հատվածում առկա եռատող վիմագիրն ամբողջությամբ վերծանել: Ըստ վիմագրի՝ խաչքարը կանգնեցվել է 1273 թվականին՝ ունի Մեսրափ կողմից իր եւ կողակցի համար:

- **Մեր ունեցած տեղեկություններով՝ վերջին տարիներին այլազգի որոշ հետազոտողներ, ամենայն հավանականությամբ օսեթներ, սկսել են պնդել վարկած, թե իբր ննջեցյալ Ալան «թագավորը» իրականում ազգությամբ ալան է, սակայն անունը տապանագրում նշված չէ, փոխարենը նրա ծնողների՝ Չաղարի եւ Բաբախաթունի անուններն են նշված, որոնց եւս համարում են ալաններ կամ օսեթներ:**

**Ձեր տեսակետը:**

- Տապանագրում ննջեցյալի անվան բացակայությունը եւ դրա փոխարեն ազգությունը նշելը, ինչպես նրանք են պնդում, առնվազն տրամաբանությունից դուրս է:

Ուստի եւ՝ առաջնորդվելով գիտական բարեխղճությամբ, վստահաբար կարող եմ արձանագրել՝ տապանագրում հիշատակված է մանուկ հասակում վախճանված Ալանի անունը, ով իր վաղաժամ մահվամբ սուգ եւ կսկիծ է թողել ծնողների՝ Չաղարի ու Բաբախաթունի սրտերում, անուններ, որոնք հայտնի են հայկական այլ աղբյուրներում նույնպես:

Տապանաքարը թվակիր է՝ 1326թ. :

Մի խոսքով՝ այդ վարկածի հեղինակները հիմք են ընդունել ննջեցյալի անունն իբրեւ էթնիկ անուն, որի հիման վրա կառուցել են գիտականորեն չհիմնավորված եւ տրամաբանությունից դուրս թեզը:

- **Տեղափոխվե՞նք Ներքին շեն. ինչպե՞ս եք արժեւորում այդ բնակավայրի մշակութային ժառանգությունը:**

- Կենտրոնում կանգուն է եռանավ բազիլիկ Սուրբ Մինաս եկեղեցին, որի հյուսիսարեւելյան մույթի արեւելահայաց նիստին պահպանված է թվականը՝ ՌՃԸ, վկայում է՝ առնվազն 1659 թվականին եկեղեցին կանգուն է եղել:

Գյուղատեղիի պատմության խոսուն վկաներն են նաեւ եկեղեցու շուրջը տարածված գերեզմանոցի խաչքարերն ու տապանաքարերը, որոնց վաղագույն օրինակները (ըստ վիմագրերի) հասնում են մինչեւ 13-րդ դարը:

Քաջնատափի գերեզմանոցում, ինչպես վերը նշեցինք, փաստագրել ենք 1211 թվականի խաչարձան:

Խաչքարերը 15-16-րդ դարերի խաչքարային արվեստի ինքնատիպ եւ ուշագրավ նմուշներ են: Դրանցից մեկի վրա պահպանվել է նաեւ վարպետի անունը՝ Ղարդաշ (Ղարդաս), որի բազմաթիվ գործեր հայտնի են հայազիտությանը (գործել է 16-րդ դարում):

- **Ինչպե՞ս եք գնահատում հուշարձանների պահպանության վիճակը Հին Հարժիսում:**

- Ծայրահեղությունից՝ ծայրահեղություն: Եթե Սուրբ Մինաս եկեղեցին ինձ հանդիպած՝ Գորիսի տարածաշրջանի ուշմիջնադարյան եկեղեցիներից թերեւս ամենաբարվոք եւ մաքուր կառույցն է, ապա մեծ ցավ ապրեցի՝ տեսնելով Ալան թագավորի եկեղեցական համալիրի՝ փլուզման եզրին գտնվող վիճակը: Հուշարձանի գավթի տանիքի քարերը թափվել էին նաեւ նախորդ տարվա տեսածիս համեմատ ու լցվել մանուկ Ալանի տապանաքարի շուրջը: Հիմա խիստ վտանգավոր է եկեղեցի մուտք գործելը: Եվ, օգտվելով առիթից, կցանկանայի մեկ անգամ եւս բարձրաձայնել այդ հուշարձանի խիստ անմխիթար վիճակի մասին եւ հորդորել պատկան մարմիններին՝ վերահաս աղետից խույս տալու համար՝ հնարավորինս շուտ, միջոցներ ձեռնարկել, գոնե ամրակայել:

Աղբյուրը՝ <https://syuniacyerki.am/mijnadaryan-syuniqi-vimagrutyan-hetqerov-nor-batsahaytumner-hin-harzhisum>

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի աշխարհագրության (18 ժամ), ֆիզիկայի (18 ժամ), կենսաբանության (8 ժամ) ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափսի,
- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/դիպլոմ
- Անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- Ինքնակենսագրություն (Ձև 5),
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ավարտը վերցնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ օգոստոսի 22-ից մինչև սեպտեմբերի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 8-ին, ժամը 10:00-ին, ՀՀ Սյունիքի մարզի Կապանի թիվ 6 հիմնական դպրոցում. հասցեն՝ ք. Կապան Մ. Հարությունյան փ. 5-Ա

Տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարներին՝ 077782955 կամ 028553783:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/haytararutyun-43>

**20.08.2023 թ.**

**Հայտարարվել է 4 ճանապարհների հիմնանորոգման մրցույթ, այդ թվում՝ Գորիսից մինչև ՀՀ սահման**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հայտարարել է չորս ճանապարհահատվածների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման մրցույթ: Տեղեկությունը հրապարակված է «Ճանապարհային ղեկարտամենտ» հիմնադրամի պաշտոնական [կայքէջում](#):

Մրցույթը հայտարարվել է հետևյալ ճանապարհահատվածների հիմնանորոգման աշխատանքների համար.

- Մ-12, /Մ-2 Գորիս – Տեղ գյուղի ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի առաջին 4 կմ
- S-3-44, /Մ-5/ Արմավիրի մարզի Ծիածան – Աղավնատուն – Լեռնամերձ առաջին 7,3 կմ
- S-3-61, /Մ-5/ Արմավիրի մարզի Նորապատ ավտոճանապարհի առաջին 1,7 կմ •

S-8-56, /Մ-2/ Սյունիքի Հարժիս ավտոճանապարհի առաջին 8 կմ:

Հիմնադրամից տեղեկացնում են, որ մրցութային հայտերն ընդունվում են մինչև օգոստոսի 29-ը՝ ժամը 11:30:

Աղբյուրը՝ <https://armeniasputnik.am/20230820/hajtararvel-e-4-tshanaparhneri-himnanvorvogman-mrcujt-ajd-tvum-gvorisic-minchev-hh-sahman-64648068.html>

**20.08.2023 թ.**

**Երևանից Կապան եւ հակառակ ուղղությամբ թռիչքները կլինեն ամեն երկուշաբթի և ուրբաթ. Տոմսի արժեքը՝ սկսած 20 հազար դրամից**

Բոլոր նրանք, ովքեր կցանկանան մեկնել Երևանից Կապան ու Կապանից Երևան օդանավով, արդեն ունեն այդ հնարավորությունը: Հայտնում են Սյունիքի մարզպետարանից:

Թռիչքները՝ ամեն երկուշաբթի և ուրբաթ

-Թռիչքը Երևանից՝ ժամը 08:00,

-Կապանից՝ ժամը 10:00:

Տոմսերի ամրագրումների համար կարող եք դիմել «Ատլանտիս» ընկերություն

Արժեքը՝ սկսած 20.000 դրամից

060 40 40 40

060 40 11 11

055 54 75 47(Viber/WhatsApp/Telegram)

Մայր-Նովա 29

Աղբյուրը՝ <https://news.am/arm/news/776293.html>

**19.08.2023 թ.**

**Հանդիսավոր նիստ եւ պարգևատրումներ**

«Կապան, քեզանում են մեր բոլոր ակունքները» կարգախոսով՝ մշակույթի կենտրոնի մեծ դահլիճում տեղի ունեցավ տոնական հանդիսավոր նիստ, որի ընթացքում կապանցիներին շնորհավորեցին Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ տեր Մակար վարդապետ Հակոբյանը, Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը, Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը, Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը, մանկավարժ Լևոն Մարգարյանը: Ներկայացվեց Ստեփանակերտի քաղաքապետի շնորհավորական ուղերձը:

Կապան քաղաքի օրվա կապակցությամբ ավանդույթի համաձայն Գևորգ Փարսյանի կողմից պատվոգրերի, շնորհակալագրերի և ՀՀ Կենտրոնական բանկի կողմից թողարկված հուշադրամների արժանացան համայնքի զարգացման տարբեր ոլորտներում իրենց ավանդը ներդրած մի շարք կապանցի երաշխավորներ:

Համայնքի ղեկավարի որոշմամբ՝ Կապան համայնքի բարձրագույն՝ «Կապան» մեդալով է պարգևատրվել վաստակաշատ մանկավարժ Ռոման Ստեփանյանը:

Պաշտոնական մասից հետո ներկաները վայելեցին տոնական համերգ՝ մշակույթի կենտրոնի Էստրադային-սիմֆոնիկ նվագախմբի, երգիչ-երգչուհիների, Կապանի կանանց երգչախմբի մասնակցությամբ:

Աղբյուրը՝ [https://www.facebook.com/Kapanmunicipality/posts/301466935757429?ref=embed\\_post](https://www.facebook.com/Kapanmunicipality/posts/301466935757429?ref=embed_post)

**18.08.2023 թ.**

## Նախանշում են համագործակցության եզրերը

«Կապանի ակումբագրադարանային միավորում» ՀՈԱԿ-ի էլեկտրոնային գրադարանում տեղի ունեցավ Ռուսաստանի Դաշնության հարավային վարչական շրջանի և Կապանի համայնքապետարանի աշխատակազմերի հանդիպումը:

Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը հյուրերին երախտագիտություն հայտնեց հանդիպման հրավերն ընդունելու համար և նախանշեց այն ոլորտները, որոնց շրջանակում կարող են համագործակցել:

Մոսկվա քաղաքի կառավարության միջազգային տնտեսական կապերի դեպարտամենտի ղեկավարի տեղակալ Իգոր Տկաչը, Մոսկվա քաղաքի հարավային շրջանի պրեֆեկտուրայի ապարատի ղեկավար Ալեքսանդր Երոշինը իրենց խոսքում հստակեցրին այդ համագործակցության եզրերը Կապան քաղաքի և Մոսկվա քաղաքի հարավային վարչական շրջանի միջև:

Հանդիպումից հետո հյուրերը հետաքրքրվեցին էլեկտրոնային գրադարանի գրքային ֆոնդով, ծանոթացան գրքերի ցուցադրանքին, այդ թվում՝ ռուսական գրքի:

Այնուհետև կողմերի ներկայացուցիչները եղան Կապանի արվեստի թանգարանում, Կապանի մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոցում, արվեստի մանկական դպրոցում, թիվ 3-րդ միջնակարգ դպրոցում, ռուսական գրքի տանը («Дом русской книги»):

Այցելեցին Վահանավանք:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/nakhanshum-en-hamagortsaktsutyanyan-ezrery>

**11.08.2023 թ.**

### Ազարակի պղնձամոլիբդենայինի նոր ղեկավարն է Ալեքսանդր Բելյանը

«Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունում գլխավոր տնօրենի փոփոխություն է տեղի ունեցել: Հունիսի 5-ից ընկերության ղեկավարումը ստանձնել է Ալեքսանդր Գրիգորևիչ Բելյանը:

Օգոստոսի 8-ին ճեպագրույց ունեցանք նորանշանակ տնօրենի հետ:

#### *Այցեքարտ*

Ալեքսանդր Բելյան, ծնվել է 1976 թվականի նոյեմբերի 28-ին: Գերազանցությամբ ավարտել է Կուզբասի պետական տեխնիկական համալսարանը՝ «Օգտակար հանածոների ծննդավայրի բաց մշակում» մասնագիտացմամբ: Լեռնային ինժեներ է:

1998-2002 թվականներին աշխատել է «Չերնիգովեց» ՓԲԸ-ում՝ լեռնային վարպետ:

2002-2003 թվականներին ինժեներ-խորհրդատու էր «Global Technology Group»-ի մոսկովյան ներկայացուցչությունում:

2003-2004 թվականներին տարածաշրջանային մենեջեր էր «Азот-Взрыв» ՓԲԸ-ում:

2004-2014 թվականներին կոմերցիոն տնօրեն և գլխավոր տնօրեն էր «Азот-Черниговец» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Азот-Взрыв» ընկերությունների խմբում:

2014-2021 թվականներին «Азот Майнинг Сервис» բաց բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի առաջին տեղակալն էր:

2021 թվականից մինչև Ազարակի պղնձամոլիբդենայինի գլխավոր տնօրեն նշանակվելը Նենեցյան ինքնավար օկրուգի «НИПИГОРМАШ» ՍՊ ընկերության Նորիլսկի առանձնացված ստորաբաժանումների տնօրենի տեղակալն էր, ապա՝ տնօրենը:

- Ալեքսանդր Գրիգորևիչ, նախ շնորհավորում ենք «Ազարակի ՊՄԿ» ՓԲ ընկերության ղեկավարումը ստանձնելու առիթով և Ձեզ հաջողություններ ցանկանում:

Երկու ամսից ավելի է՝ ընկերության ղեկին եք, առաջին սպավորությունները:

- Ազարակի ՊՄԿ-ն Հայաստանի հանքարդյունաբերության առաջատար ձեռնարկություններից է: Ձեռնարկության աշխատանքը պլանավորված է ինչպես միջնաժամկետ (1-3 տարի), այնպես էլ



երկարաժամկետ (5-10 տարի) հեռանկարով: Խնդիրները, որ դրված են ընկերության ղեկավարության առջև, և դրանց լուծման ուղիները, հնարավորություն են տալիս ազնվորեն կանխատեսել ձեռնարկության զարգացումը: Աշխատանքներ են նախատեսվում հարստացուցիչ ֆաբրիկայում հնացած սարքավորումների փոխարինման, տրանսպորտային միջոցների անձնակազմի և այլոց համար աշխատանքային հարմարավետ պայմաններ ստեղծելու ուղղությամբ:

- **Ոչ սովորական ժամանակներ ենք ապրում, որը չի կարող անդրադարձներ չունենալ նաև մեր հանրապետության խոշոր տնտեսվարողների գործունեության վրա: Կարողանում եք հաղթահարել օրինաչափ դժվարությունները, որ առկա են հատկապես առաքման ու մատակարարման և ընդհանրապես լոգիստիկ ոլորտներում:**

- Լոգիստիկ խնդիրներ չկան, կոմերցիոն ծառայությունը հետևում է գործընթացներին: Խնդիրներն արագ հարթվում են, և կարելի է ասել՝ արտառոց ոչինչ չկա: Այն պլանները, ծրագրերը, որոնք տարվա կտրվածքով նախանշվել էին, կատարվում են:

- **Սովորաբար, երբ որևէ խոշոր ընկերության ղեկավարը փոխվում է, նոր տնօրենը գալիս է իր թիմով կամ իր գաղափարակիցներով ու համախոհներով:**

Ազարակի պղնձամուլիբդենային ընկերությունում տարիներ ի վեր կադրային և հատկապես ինժեներատեխնիկական պրոֆեսիոնալ անձնակազմ է ձևավորվել, ենթադրում ենք՝ այդ մարդկանց հետ կշարունակեք Ձեր գործունեությունը, թե ...

- Ինձ բաժին հասավ ուժեղագույն և փորձառու թիմ: Գործող թիմի անդամները՝ հիմնականում, աշխատում են երկար տարիներ, ինքս էլ կաշխատեմ նրանց հետ: Նորամուծություններ, այո, կլինեն կառավարման ոլորտում, ավտոմատացման համակարգում:

- **Անշուշտ, լեռնահանքային արդյունաբերությունը սերտորեն առնչվում է բնապահպանության հետ: Ինչպե՞ս եք գնահատում բնապահպանական իրավիճակը՝ Ձեր ղեկավարած ընկերության գործունեության համապատկերի վրա, և որո՞նք են (ըստ Ձեզ) ընկերության առաջնահերթ խնդիրներն այդ ոլորտում:**

- Աշխատանքի անվտանգության, բնապահպանության խնդիրներն ինձ համար, որպես ղեկավարի, առաջնահերթ տեղ են զբաղեցնում: Որքան ուսումնասիրել եմ իրավիճակը, բնապահպանական լուրջ խնդիրներ չկան: Այդ առումով խնդիր է դրվել որոշ գործընթացներ ավտոմատացնել, որպեսզի նվազագույնի հասցվի մարդկային գործոնը:

- **Մոցիալական բազմաթիվ խնդիրներ ունեցող Սյունիքի մարզում, նաև Մեղրու տարածաշրջանում չափազանց կարևոր է բնակչության զբաղվածության խնդիրը: Կարո՞ղ ենք առաջիկայում ակնկալիքներ ունենալ նոր աշխատատեղերի ստեղծման առումով:**

- Նույնիսկ առկա հաստիքացուցակը չենք կարողանում համալրել, այդպես է ստացվել: Ազարակը հանրապետության ամենահարավում է գտնվում, մարդիկ այնքան էլ հակված չեն այստեղ գալու, չնայած աշխատավարձերը (երբ համեմատում եմ Հայաստանի ձեռնարկությունների, նույնիսկ Ռուսաստանի Դաշնության որոշ ընկերությունների հետ) բավականին ծանրակշիռ են, ինչն այստեղ պիտի բերեր մարդկանց: Երկու ամիս է՝ ինչ աշխատում եմ, նկատել եմ՝ կան թափուր հաստիքներ, պաշտոններ, որ չենք կարողանում համալրել անհրաժեշտ մասնագետներով:

Ի դեպ, կոմբինատի հանքահումքային պաշարները բավականին հուսադրող են տասնամյակների կտրվածքով...

- **Եվ վերջին հարցը. ի՞նչ կուզենայիք ասել հանրությանը, մասնավորապես Մեղրու և Ազարակի բնակչությանը, քանի որ առաջին անգամ եք հրապարակային խոսքով հանդես գալիս:**

- Կարճ ժամանակ եմ աշխատում, բայց ինձ համար արդեն տեսանելի է ընկերության հեռանկարը... Այն արտադրանքը, որ տալիս է Ազարակի պղնձամուլիբդենային կոմբինատը, պահանջարկ ունի միջազգային շուկայում: Հայաստանը մոլիբդենի արտադրությամբ 6-8-րդ տեղն է զբաղեցնում աշխարհում: Այս տարածաշրջանը պիտի զարգանա. արտադրության զարգացման

ճանապարհին անլուծելի որևէ հիմնախնդիր չեմ տեսնում, անձնակազմի համալրման հարցն էլ կլուծենք: Միանշանակ, կոմբինատի ապագան ես տեսնում եմ: Մենք խորհրդակցել ենք «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Ռոման Խուրդոյի հետ, երիտասարդներին ուսման կողարկենք Հայաստանի, Ռուսաստանի Դաշնության լավագույն բուհեր, որ ավարտելուց հետո վերադառնան ու աշխատեն այս ընկերությունում: Մի խոսքով՝ լավատեսությամբ ենք նայում ապագային:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/agaraki-pkhndzamolibdenayini-nor-khekavarn-e-aleqsandr-belyaevy>

**12.08.2023 թ.**

### **Խնձորեսկում ոռոգման ջրագիծ է վերակառուցվում**

«Hayk for our heroes» հիմնադրամի աջակցությամբ դեպի Խնձորեսկ բնակավայր ոռոգման ջրագիծ է վերակառուցվում: Ոռոգման ջրի ակունքը Մոտիկ սար կոչվող հատվածում վթարի հետևանքով վնասվել էր, որի պատճառով լուրջ խնդիրներ էին առաջանում: Հիմնադրամի աջակցությամբ ջրագիծը վերակառուցվել է և ոռոգման ջուրն արդեն անխափան կհասնի բնակավայր: Նշենք նաև, որ Գորիսի համայնքապետարանի և ՄՄԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի շրջանակներում Խնձորեսկում կառուցվել է 3,8 կմ երկարությամբ ոռոգման ջրագիծ:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/GorisMunicipality/posts/pfbid02mXGN7NogoboDVnB2PtyMDQcyyBboi7E5zYnoP91aKdsGBCf6wCwTxLaFF1rPX2gBl>

**11.08.2023 թ.**

### **Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը և համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արսյոյն Աղաջանյանն ընդունել են Կապանում Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր հյուպատոս Մորթեգա Աբեդին Վարամինի գլխավորած պատվիրակությանը**

Հանդիպման ընթացքում քննարկվել են մի շարք կարևոր հարցեր, այդ թվում՝ տարածաշրջանում առկա անվտանգային խնդիրները, ինչպես նաև սոցիալ-տնտեսական հարցեր, կրթական և մշակութային նախաձեռնություններ: Երկու կողմերն էլ կարևորել են հետագա համագործակցության ծրագրերը, ընդգծել, որ այսուհետ առավել ակտիվ պետք է համագործակցեն մշակութային, սոցիալ- տնտեսական զարգացմանն ուղղված նախաձեռնությունների շրջանակում:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/GorisMunicipality/posts/pfbid025pnjismNKq327XVvf7NcCr46ua5wqEP86YFMQXZjskNCL9ZPpvuteV49K1c1RiAYYI>

**11.08.2023 թ.**

### **Հայ-իրանական մշակութային-խոհանոցային փառատոնը Միսիանում**

Օգոստոսի 10-ին Միսիանում կայացավ հայ-իրանական մշակութային-խոհանոցային փառատոն:

Փառատոնը նախկառուց միտված էր հայ-իրանական մշակութային կապերի ակտիվացմանը:

Փառատոնը նպատակ ուներ նորովի արթնացնել հիշողությունը Նավասարդի, ինչպես և Հայկի ու Բելի ճակատամարտի մասին, որ տեղի է ունեցել 4515 տարի առաջ՝ օգոստոսի 11-ին, որն էլ ավարտվեց Հայկի փառահեղ հաղթանակով:

Փառատոնը մեկ ուրիշ նպատակ էլ ունի՝ ևս մեկ անգամ հանրահռչակել Սյունիքի մարզի և մասնավորապես Միսիանի տարածաշրջանի զբոսաշրջային հնարավորությունները: Նաև այդ խնդրին էին ծառայեցված հրապարակում և մերձակա փողոցներում տեղադրված 80-ից ավելի տաղավարում ներկայացվող ցուցանմուշները՝ ձեռագործությունից, կիրառական արվեստից ու կերպարվեստից, նաև գեղարվեստական խեցեգործությունից:

Փառատոնի մասնակիցներն օգոստոսի լույս 11-ի գիշերը՝ ժամը 3:30-ից մինչև 4:00 Ջորաց քարերում դիտել են Հայկի համաստեղության աստղերի գալուստը:

Փառատոնի բացմանը, որ տեղի ունեցավ Միսակ Նահապետի անունը կրող հրապարակում, ելույթներ ունեցան Թաթուլ Ալթունյանի անվան հայկական ժողովրդական երգի-պարի պետական վաստակավոր անսամբլը (գեղարվեստական ղեկավար՝ Գրիգոր Ոսկանյան), Հայաստանի վաստակավոր արտիստներ Արսեն Գրիգորյանը (Մրո), Դավիթ Ամալյանը, «Կարին» ավանդական երգի-պարի համույթը՝ Գագիկ Գինոսյանի գլխավորությամբ:

Ելույթներ են ունեցել նաև Միսիանի «Գրանդ դանս» պարային համույթը (գեղարվեստական ղեկավար՝ Արման Դավթյան), Աղվան Մինասյանի անվան արվեստի և ստեղծագործական կենտրոնի պարային խումբը (գեղարվեստական ղեկավար՝ Արմինե Սարգսյան), Դարբասի թանգարանի արվեստի դպրոցի պարի խումբը՝ Լուսինե Հովհաննիսյանի ղեկավարությամբ, Համո Սահյանի անվան քաղաքային մշակույթի կենտրոնի ժողգործիքների համույթը՝ Հարություն Գրիգորյանի գլխավորությամբ:

Հարյուրավոր սիսիանցիներ, ինչպես և հյուրեր ու զբոսաշրջիկներ ժամեր շարունակ ունկնդրում էին գեղարվեստական այդ համույթների ելույթները, որից հետո էլ տեղափոխվեցին Ջորաց քարեր:

Իսկ Միսիանի համայնքապետարանը՝ Արմեն Հակոբջանյանի գլխավորությամբ, ամեն ինչ արել էր փառատոնը պատշաճ մակարդակով անցկացնելու համար:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/hay-iranakayn-mshakutayin-khohanotsayin-paratony-sisianum>

**10.08.2023 թ.**

### **Ինչո՞ւ էին աղմկում հարժիսցիները**

Սյունիքի մարզի Տաթև համայնքի Հարժիս գյուղի բնակիչները, օգոստոսի 10-ին, ժամը 11-ին մի քանի բողոքով փակել էին Մ2 Երեւան-Մեղրի մայրուղու Գորիս-Միսիան հատվածը: Բողոքավորները պահանջում էին հստակ նշել, թե երբ են նորոգելու մայրուղուց դեպի գյուղ տանող 6 կմ ճանապարհը: Հետաքրքիր է, որ մոտ 30 տարի այս ճանապարհը չի նորոգվել, ու արդեն, երբ նախագաձային բոլոր փաստաթղթերը պատրաստ էին, հարժիսցիները որոշեցին ճանապարհ փակել: Aravot.am-ի տեղեկություններով՝ Տաթև համայնքի ղեկավար Մամվել Լալայանը մի քանի օր առաջ տեղյակ էր պահել գյուղի բնակիչներին՝ նշելով, որ մի քանի օրից հետո կհայտարարվի մրցույթ՝ ընտրելու համար ճանապարհը նորոգող ընկերությունը: «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամից Aravot.am-ին տեղեկացրին, որ երբեք Հարժիսի բնակիչների կողմից ճանապարհի վատ վիճակի առնչությամբ բողոքներ չեն եղել: «Ճանապարհին կատարված ուսումնասիրությունների արդյունքում որոշվել է հիմնանորոգել S-8-56, /Մ-2/ – Հարժիս ավտոճանապարհի կմ 0+000 – կմ 8+000 հատվածը, եւ 2022թ. հուլիսի վերջին հայտարարվել է նախագծերի պատրաստման եւ ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման մրցույթ (նշենք, որ մանրամասն նախագիծ իրականացնելու համար ժամանակ է անհրաժեշտ): Հիմնանորոգման նախագիծն այժմ առկա է: Եվ ճանապարհին առնչվող այս ամբողջ գործընթացների վերաբերյալ Հարժիսի բնակիչները շատ լավ տեղյակ են, երբեւէ ճանապարհի հետ կապված որեւէ հարց չեն բարձրացրել, ուստի զարմանալի է այսօր նրանց կողմից կազմակերպված ակցիան», -նշեցին «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամից: Այս

պարագայում զարմանալի էր, որ գյուղացիներն անգամ մի քանի բոլորով կաթվածահար արեցին միջպետական ճանապարհը: Կարծիք կա, որ ճանապարհի փակելը եղել է ուղղորդված:

Աղբյուրը՝ <https://www.aravot.am/2023/08/10/1360729/>

**09.08.2023 թ.**

**ԶՊՄԿ-ն սկսում է ընկերության համապարփակ թվայնացման նոր գործընթաց  
Հարցազրույց «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության թվայնացման գծով տնօրեն Սաղեկ Ազիմովի  
հետ:**

Սաղեկ Ազիմովն արմատներով Ուզբեկստանից է, ծնվել և մեծացել է Ռուսաստանում: ՏՏ ոլորտի առաջատար մասնագետներից է տարածաշրջանում:

Ավարտել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ՏՏ ֆակուլտետը, ստացել բակալավրի և մագիստրոսի կոչումներ, այնուհետև ուսումը շարունակել Մադրիդում, ունի MBA կոչում IE բիզնես դպրոցից:

Իր կարիերայի ընթացքում աշխատել է խոշորագույն ռուսական օդանավակայանների հոլդինգի թվային վերափոխման խոշոր նախագծերում, կազմակերպել է ՏՏ բաժին՝ «Գազպրոմնեֆտի» նոր կազմավորված ոչ ստանդարտ դուստր ձեռնարկությունում:

BNP Paribas Cardiff Russia-ի համար քաղաքականությունների թողարկման և վաճառքի ավտոմատացման համակարգ է իրացրել, աշխատել է «Սբերբանկի» մեդիա ակտիվների կառավարման համապարփակ լուծման վրա, կառավարել է նախագիծը՝ նախավաճառքի փուլից մինչև հաճախորդի կողմից ընդունումը:

**- Պարոն Ազիմով, շնորհակալ ենք մեզ ժամանակ տրամադրելու համար, պատմեք Ձեր մասին, նախ՝ որտեղից եք Դուք:**

- Ես էթնիկ ուզբեկ եմ, ծնվել եմ Մոսկվայում, որտեղ ավարտել եմ միջնակարգ դպրոցն ու համալսարանը, այնտեղ եմ ձևավորվել, հասունացել որպես մարդ և մասնագետ:

Աշխատանքային գործունեությունս սկսել եմ անմիջապես ուսումնառությունից հետո: Աշխատել եմ Սիբիրում, Կամչատկայում, որտեղ ավտոմատացրել ենք էներգետիկ համակարգը: Աշխատել եմ Չեյաբինսկում: Մեծամասամբ աշխատել եմ Ռուսաստանի տարբեր շրջաններում:

**- Մենք գիտենք, որ ներկայումս ԶՊՄԿ-ում իրականացվում է թվայնացման ծրագիր: Իսկ Դուք ղեկավարում եք նախագիծը՝ թվայնացման գծով գլխավոր տնօրենի տեղակալի կարգավիճակում: Ի՞նչ է գործընթացների թվայնացումը և ի՞նչ օգուտներ կտա այն:**

- Թվայնացումը տարբեր «ձեռքերով» արվող գործառնությունների փոխանցումն է թվային ձևի: Եթե նախկինում մենք տվյալները պահում էինք փաստաթղթերի վրա, հիշողության մեջ, ապա այժմ ստեղծվում է ընդհանուր պահեստային տարածք: Աշխատակիցների համար ստեղծվում է միասնական թվային հարթակ, տվյալների կառավարման թափանցիկ մեխանիզմ, որի միջոցով կարելի է հասկանալ ամբողջ գործընթացը: Համակարգն ընդհանուր պատկերացում կտա, թե ինչ որոշումներ պետք է կայացվեն. անհրաժեշտ են արդյոք նոր մեքենաներ, սարքավորումներ կամ տեխնոլոգիայի փոփոխություն և այլն: Սա առաջին փաստարկն է, թե ինչու է անհրաժեշտ թվայնացումը:

Իսկ երկրորդ փաստարկն այն է, որ այս ամենի հետևանքով աշխատանքն ավելի արդյունավետ է դառնում:

**- Ծանոթացրեք, ինդրեմ, ընթացիկ նախագծերին, ապագայի պլաններին՝ հնարավորինս հանգամանակից:**

- ԶՊՄԿ ղեկավարությունը ցանկություն է հայտնել ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ ապահովել ընկերության արդյունավետ և կայուն զարգացումը: Այս փուլը ներառում է

ներկայումս առկա գործընթացները հասկանալը և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը՝ ընդհանուր արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Թվային տեխնոլոգիաների օգնությամբ կատարվում է ավտոմատ պլանավորում. կարելի է շատ արագ հասկանալ, թե որքանով են արդյունավետ աշխատանքները, համարժեք պլանավորել արտադրությունը և ճշգրիտ կառավարել այն: Վերոնշյալը վերաբերում է արտադրական բոլոր ոլորտներին:

Թվային փոխակերպում- ասել է թե՛ առանձին համակարգերից մեկ ընդհանրական համակարգի ստեղծում, ողջ ձեռնարկությունում շրջանառվող տվյալների հոսքի ընդհանուր քարտեզի ստեղծում՝ արդյունավետության բարձրացման նպատակով:

Ընկերությունում կան շատ պատասխանատու և հմուտ մասնագետներ, ովքեր իրենց ոլորտի՝ իրենց հատվածի գիտակ են: Մեր խնդիրն է՝ նրանց հետ միասին մշակել ճարտարապետական լուծումներ, որոնց շնորհիվ բոլոր օղակները փոխկապակցված կլինեն:

**- Ինչո՞ւ են ընդհանրապես անհրաժեշտ SS ճարտարապետները...**

- Ոչ վաղ անցյալում մարդն աշխատում էր համակարգչով, և բարդ ինտեգրացիաներ չէին լինում այն պատճառով, որ SS-ն ընդամենը մեխանիզմ էր՝ միմյանց հետ չառնչվող աղյուսակներում տվյալները մուտքագրելու համար: Ժամանակակից կյանքը շատ ավելի մոտ է տեխնոլոգիաներին: Մեր հիմնական նպատակն է նվազագույնի հասցնել ձեռքի աշխատանքը, կատարել ճիշտ հաշվարկներ. վերահաշվարկել սխալներն ու ռիսկերը, արդյունքում՝ աշխատանքի կայուն գործընթաց:

**- Կարո՞ղ եք արդյոք ասել՝ որքա՞ն ժամանակ կպահանջվի տեսանելի արդյունք ունենալու համար:**

- Մենք մշակել ենք ծրագիր, ըստ որի մինչև տարեվերջ կհաստատվեն վերջնական ճարտարապետական լուծումները՝ իրականացման ժամկետներով: Սակայն զուգահեռաբար կիրականացնենք նախագծերի մի մասը՝ արագացնելով ժամանակացույցը, բայց համատեղելիության սկզբունքը պահպանելով: Այսինքն՝ նախագծերի մի մասը հիմա է սկսվում:

**- Պարոն Ազիմով, իսկ նախկինում եղե՞լ եք Հայաստանում:**

- Հայաստանում առաջին անգամ եմ, բայց, ինչպես գիտեք, Ուզբեկստանում մեծ թվով հայեր են ապրում, եւ իմ ընտանիքի անդամների շրջանում շատ են հայերը, ու նրանց մասին միշտ դրական արձագանք եմ լսել մերձավորներիցս: Թեեւ շատ եմ ճանապարհորդել ու աշխատել նախկին ԽՍՀՄ երկրներում, բայց առաջին անգամ եմ Հայաստանում, և ասեմ՝ ինձ շատ դուր եկավ Հայաստանը: Հատկապես հիացած եմ Սյունիքի գեղեցկությամբ՝ բնությունը, ճարտարապետությունը, մշակութային կոթողները... Գիտեմ՝ դեռ շատ բան ունեմ տեսնելու: Շատ հարմարավետ եմ զգում ինձ այստեղ:

**- Իսկ ինչո՞վ է պայմանավորված Ձեր հարմարավետությունը Հայաստանում:**

- Դե, բնականաբար, ավելի շատ մարդկանցով է պայմանավորված: Ես և մեր աշխատանքային թիմը միտված ենք դրական արդյունք ստանալուն ու քրտնաջան աշխատում ենք: Հայաստանը, ինչպես գիտեք, առաջադեմ երկիր է SS ոլորտում: Ռուսաստանում՝ այս ոլորտի ծանոթներիս ու ընկերներիս մեջ կան հրաշալի հայ մասնագետներ: Եվ երբ համաձայնեցի ստանձնել այս աշխատանքը, միանգամայն վստահ էի՝ Հայաստանում կան լավ մասնագետներ, իմ խնդիրն է արդյունավետ աշխատել տեղացի մասնագետների հետ և հասնել տեսանելի արդյունքի: Թիմն այստեղ ընկերասեր է, պրոֆեսիոնալ, ինչը կարևոր գրավականներից է: Եվ, իհարկե, դեռ վաղ է ամփոփել, բայց գիտեմ, որ մենք՝ համատեղ, լավ արդյունք ենք ունենալու:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/zpmk-n-sksum-e-ynkerutyam-hamaparak-tvaynatsman-nor-gortsyntats>

**04.08.2023 թ.**

**Արտասովոր իրավիճակ Խոտ-Որոտան այլընտրանքային ճանապարհին**

Վերջին օրերի հորդառատ տեղումների հետեւանքով առաջացած հեղեղումները մեծ վնաս են պատճառել Խոտ-Որոտան կառուցվող ճանապարհին: Անձրեւաջրերի կատաղի ու արագ հոսքը բազմաթիվ տեղերում առաջացրել է փլվածքներ, փոսեր, որոշ հատվածներում էլ հսկայածավալ լեռնազանգվածները պոկվել եւ գլորվել են ցած: Քանդվել են ճանապարհի ենթակառուցվածքներ, բազմաթիվ տեղերում (լեռան լանջերին) նոր ձորեր ու ձորակներ են առաջացել...

Արդյունքում՝ առնվազն երկու հատվածում ամբողջապես փլուզվել կամ փակվել է Խոտ-Որոտան՝ այսպես կոչված այլընտրանքային ճանապարհը, որը Գորիս-Կապան մայրուղու՝ Էյվազլարի հատվածն ազերիների կողմից բռնազավթելուց հետո, դարձել էր կյանքի յուրօրինակ ճանապարհ Որոտան, Շուտնուխ եւ Բարձրավան գյուղերի համար:

Շուրջ յոթ օր, փաստորեն, փակ էր Խոտ-Որոտան ճանապարհը:

Եվ միայն երկու օր առաջ՝ ճանաչված շինարար Էդուարդ Բեգոյանի գլխավորած «Ճանապարհաշինարար» ՍՊԸ-ի ջանքով, առաջին եւ խոշոր փլվածքի տեղանքով մեքենաների համար (ժամանակավոր) անցանելի ճանապարհ բացվեց:

Ավելի խնդրահարույց է քանդվածքի երկրորդ հատվածը, որտեղ մեքենաների անցանելիությունը դեռեւս ապահովված չէ: Ու, դարձյալ նույն շինկազմակերպության նախաձեռնությամբ, միակողմանի եւ շրջանցիկ ուղի բացվեց այգեմիջյան ճանապարհներով՝ Որոտան հասնելու համար:

Շրջանցող այդ ուղին, սակայն, անցանելի է ոչ բոլոր մեքենաների համար՝ ոչ միայն նեղության, այլեւ ցեխաջրերի, քարակույտերի ու ցեխացած հողային շերտի առկայության պատճառով:

Այդ ամենի հետեւանքով է, որ Որոտան գյուղն արտաքին աշխարհի հետ առայժմ հիմնական կապն ապահովում է Թասի լեռնանցք-Բարձրավան ճանապարհով, որտեղից էլ՝ նորակառույց ճանապարհով՝ Քաշունիի խաչմերուկում, միանում է Տաթեւ-Կապան մայրուղուն:

Խոտ-Որոտան ճանապարհի երկարությանը գրեթե չորս-հինգ անգամ գերազանցող ճանապարհով են հիմա շինարարները Գորիսից Որոտան հասնում կամ այնտեղ շինանյութ տեղափոխում: Այդ ճանապարհով է երթուղայինը Գորիսից Որոտան հասնում: Այդ ճանապարհով են Տաթեւիկի աշխատակիցները Գորիսից գործատեղ հասնում...

***Որոտանցիներին (եւ ոչ միայն) հետաքրքրում է՝ ե՞րբ է, ի վերջո, վերականգնվելու-վերաբացվելու Խոտ-Որոտան ճանապարհը, մի թե վերջին օրերի լուրջությունն ու անտարբերությունը վերջ չպիտի ունենան:***

Մեկ այլ հարց էլ ուղղակի ապշեցնում է որոտանցիներին. ***պետական միջամտությամբ Որոտան գյուղում հացաթխման կետ է հիմնվել Մ2-ի օկուպացումից հետո, որը բարձրորակ հաց է մատակարարում Որոտան, Շուտնուխ, Բարձրավան գյուղերի բնակիչներին, ճանապարհ լինելու դեպքում՝ նաեւ խոտեցիներին, բայց... Որոտանում՝ հացաթխման վայրից մի քանի հարյուր մետր հեռավորության վրա ծառայություն իրականացնող մեր զինվորականների համար հաց են բերում 60 կմ հեռավորությամբ գտնվող Կապանից...***

Որոտանից վերադառնալուց հետո հեռախոսագրույց ունեցանք «Ճանապարհ» ՍՊ ընկերության ղեկավար Էդուարդ Բեգոյանի հետ: Ուրախացնող էր նրա լավատեսությունը. Խոտ-Որոտան ճանապարհին, որի հողային աշխատանքները վաղուց պետք է ավարտված լինեին, երեք անգամ սողանք է արձանագրվել՝ հարյուրավոր մետրեր ընդգրկող, մեկ-երկու անգամ՝ հեղեղ՝ կատարված աշխատանքի արդյունքները որոշակիորեն ի չիք դարձնելով: Բայց ինքն այլ կերպ է մտածում. ***«Պատկերացնո՞ւմ եք, եթե այդ սողանքները, հեղեղումները տեղի ունենային այն ժամանակ, երբ ավարտված կլինեք ճանապարհի շինարարությունը, երբ շահագործման հանձնված կլինեք այն: Այն ժամանակ ոչ միայն քանդվածքներ կունենայինք, այլեւ (միգուցե)՝ մարդկային կորուստներ: Այնպես որ՝ «լավ» է, որ շինարարության այս փուլում են աղետներ տեղի ունեցել եւ ի հայտ եկել տարածքի խնդրահարույց հատվածները...»:***

Լավատեսությամբ էլ իր խոսքն ավարտեց Էդուարդ Բեգոյանը՝ *«Ինչ էլ լինի, ինչ էլ պատահի՝ Խոտ-Որոտան ճանապարհը կառուցելու եմ, եւ այն լինելու է բարձրակարգ մայրուղի...»*։

Իհարկե, լավ է, որ ճանապարհաշինական կազմակերպության փորձառու ղեկավարն այդպես է մտածում եւ գործում...

Սակայն, մենք շարունակում ենք մնալ կարծիքին, որ արտահայտել ենք դեռեւս երեք տարի առաջ, երբ նոր-նոր մեկնարկում էր Խոտ-Որոտանի կառուցումը. *քանի դեռ ջրերի հոսքը կառուցվող ճանապարհի ողջ երկարությամբ չի կառավարվում եւ չի կասեցվում, դժվար է լինելու (գուցե եւ անհնար) սողանքներից խուսափելը...*

Ստեղծված ոչ սովորական իրավիճակում, ըստ էության, բոլորից առաջ եւ բոլորից շատ մտածելու խնդիր ունեն նախագծողները. *երեք տարում այդպես էլ նրանք չկարողացան Խոտ-Որոտան ճանապարհի համար այնպիսի երթուղի նախանշել, որ բացառվեն հնարավոր սողանքները*։ Եվ դա այն դեպքում, երբ (նաեւ տեղացիների կարծիքով) Խոտից Որոտան ճանապարհ կառուցելու համար ավելի հուսալի երթուղիներ գոյություն ունեն...

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/artasovor-iravichak-khot-orotan-aylyntranqayin-chanaparhin>

Կազմող՝ Ս. Ալավերդյան